

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2016

9-րդ դասարան

**Ա. Աշխատանք բնագրով:** (12 միավոր)

Հին հույների կարծիքով, աստվածների մշտական բնակատեղին Օլիմպոս լեռան գագաթն էր: Օլիմպիական աստվածներն ապրում էին հավիտենական երանության մեջ, կերակրվում էին ամբրոսիայով և խմում նեկտար: Օլիմպիականների գերագույն աստվածը Ջևան էր: Նրա բնակատեղին համարում էին Օլիմպոս սարը: Այստեղ էին նրան բարեբանում բանաստեղծները: Ամենուրեք նրա պատվին կառուցված էին տաճարներ և խորաններ: Ամենանշանավորը Ֆիդիասի կերտած տաճարն է, որը դասվեց աշխարհի յոթ հրաշալիքների թվին: Արձանը պատկերել է Ջևան՝ գահին բազմած, գլխին դրասանգ, ուսին պատմուճան, ձեռքին գայիսոն, որի վրա նստած էր արծիվը

1. Բացատրե՛ք **ամբրոսիա** և **նեկտար** բառերի իմաստները:
2. Գրե՛ք **բնակատեղի** բառի հարանունը և բացատրե՛ք նրանց իմաստները:
3. Հայոց դիցարանում ո՞ր աստվածն է համապատասխանում Ջևանին:
4. Թվարկե՛ք աշխարհի յոթ հրաշալիքներից երեքը:
5. Որո՞նք են **ճաղկաշղթա**, **պարեգոտ**, **գավազան**, **տարփողել** բառերի հոմանիշները տեքստում:
6. Գրե՛ք այն շրջասությունը, որը նշանակում է **արծիվ**:
7. **Յոթ** թվականով կազմված ո՞ր դարձվածքն է նշանակում **շատ հեռու** :
8. Տեքստի երկրորդ նախադասությունը վերածե՛ք բարդ ստորադասական նախադասության, որի ստորադաս նախադասությունը գլխավորի հետ կապվի հարաբերական դերանունով:

**Բ.** Բացատրե՛ք՝ «**Թող այսօր էլ արեգակը ծագի արևելքից և մայր մտնի արևմուտքում**» թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է առաջացել: (3 միավոր)

**Գ.** Շարադրություն՝ «**Սրտի թելադրանքով**» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)